ԱՆԴՐԱՆԻԿԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

Անդրանիկն ու Հովհաննես Թումանյանը ծանոթացել են 1904 թ. դեկտեմբերի սկզբներին Թիֆլիսում։ Նրանց ծանոթացրել է Սաքո Ծովանյանը (Սևքարեցի Սաքոն)։ Երկու մեծ հայերի միջև առաջին իսկ պահից ստեղծվում են ընկերական ջերմ հարաբերություններ։ Այդ բարեկամությունը նորոգվում և առավել ուժգնությամբ է դրսևորվում 1916 թվականից։ Ամենայն հայոց բանաստեղծին և ամենայն հայոց զորավարին մտերմացնում են թե՛ հայրենիքի անորոշ ապագայի ու արևմտահայության ճակատագրի նկատմամբ ընդհանուր մտահոգություններն ու այդ նպատակին անկեղծ նվիրումը, թե՛ անձնական նկարագրերն ու բնավորության որոշ ընդհանրությունները։ Թումանյանը բազմիցս իր հրապարակային ելույթներով, ռուս, եվրոպացի և վրացի հեղինակավոր կամ պաշտոնատար անձանց հետ հանդիպումներով աշխատել է սատար կանգնել զորավարին, բացահայտել նրա անվան շուրջ պարբերաբար հյուսվող ասեկոսեների, ստահոդ լուրերի, պատմության միտումնավոր խեղաթյուրումների ու բամբասանքների սնանկությունը։ Քաղաքական վայրիվերումներն ու գերբարդ ժամանակը մազաչափ անգամ չխարխլեցին նրանց բարեկամությունը։ Ժողովրդական հերոսի գործունեության՝ բանաստեղծի բարձր գնահատականի արտահայտությունն էր նաև նրա ամենամեծ զոհաբերությունը հայրենիքին, երբ Անդրանիկի կոչով նրա տրամադրության տակ դրեց իր 8 չափահաս երեխաներին՝ չորս որդիներին՝ իբրև զինվոր, չորս դուստրերին՝ իբրև գթության քույր։

Անդրանիկի ժամանակից մինչև օրս հայ քաղաքական շրջանակներում, ինչպես նաև հայ պատմագիտության մեջ հնչում են տարբեր կարծիքներ, երբեմն իրարամերժ գնահատականներ ժողովրդական հերոսի 1916–1919 թթ. գործունեության մասին։ Մեր նպատակը չէ դրանց անդրադառնալը և գործող մոտեցումների հիմնավորվածության ու փաստարկումների էությունը ներկայացնելը։ Դա պատմաբանների խնդիրն է։ Կուզենայինք նշել միայն, որ Անդրանիկը մինչև Անդրկովկասից հեռանալը ամենից շատ վստահում ու սիրում էր իր մեծ բարեկամին, և ամենայն հայոց բանաստեղծին ուղղված նամակներում նա միանգամայն անկեղծ էր։ Յուրաքանչյուր պատեհ առիթի Անդրանիկը Թումանյանին ներկայացնում էր իր գործունեության մանրամասները, պատմում իրեն տանջող հարցերի մասին։

Հրապարակվող նամակների մի մասը գրված է Անդրանիկի ձեռագրով, մյուսները՝ նրա թելադրությամբ՝ զորավարի քարտուղարի ձեռքով։ Բոլոր նամակները՝ բացառությամբ 1918 թ. նոյեմբերի 22-ի նամակի, պահվում են Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում (այսուհետև՝ ԳԱԹ)՝ Թումանյանի ֆոնդում (այսուհետև՝ ԹՖ)։ Իսկ 1918 թ. նոյեմբերի 22-ի նամակի բնագիրը պահվում է Հայաստանի ազգային արխիվում (այսուհետև՝ ՀԱԱ)։ 12 էջ կազմող ինքնագիրը լի է ջնջումներով՝ այդ թվում ծավալուն հատ-

վածների, որոնք նույնպես տեղեկատվական բնույթ են կրում և օգտակար են ժամանակի պատմաքաղաքական իրադրությունը պատկերացնելու համար: Նամակն ամբողջությամբ հրապարակվում է առաջին անգամ, թեև նրա որոշ հատվածներ տպագրվել են ինչպես ժամանակի մամուլում՝ Թումանյանի ներկայացմամբ, այնպես էլ ավելի ուշ՝ պատմաբանների և թումանյանագետների, մասնավորապես Ծատուր Աղայանի և Լուսիկ Կարապետյանի կողմից[1]: Մնացյալ նամակները ամբողջությամբ հրապարակվում են առաջին անգամ:

Մեծ զորավարի և ժողովրդական հերոսի՝ գրողին ուղղված նամակները բացի երկու գործիչների կենսագրության կարևոր փաստ լինելուց, նաև պատմական վավերագրեր են, որոնք արտացոլում են մեր ժողովրդի գերբարդ շրջանի քաղաքական և ռազմական իրադարձությունները, վերջիններիս հանդեպ նամակագրի մոտեցումները: Առաջին ինը նամակների տեքստերը բնագրից կարդացել և վերծանել է Իրիտա Վարժապետյանը, իսկ նոյեմբերի 22-ի նամակը Սուսաննա Հովհաննիսյանը: Առաջաբանն ու ծանոթագրությունները՝ Սուսաննա Հովհաննիսյանի:

ՍՈՒՍԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ,
ԻՐԻՏԱ ՎԱՐԺԱՊԵՏՅԱՆ

– 1 –

1916, 19-ը հուլիսի, Պյատիգորսկ[2]

Սիրելի՛ Հովհաննես,

Ստացա նամակդ[3]*. գրեթե մխիթարական ոչինչ չէիր գրած:*

Իմ առողջությունս գրեթե լավ չէ. բժիշկներու տված խորհուրդները կկատարեմ. ցեխի վաննա, էլեկտրական լուսի վաննա-մասսաժ:

Մտադիր եմ այս ամսվա վերջը, օգոստոսի սկիզբը գնալ Թիֆլիս:

Ես ոչ մի տեղից լուր չունիմ. մեր Երվանդը[4] *գրած էր երկու անգամ: Կցավիմ, որ պ. Իսպենդերյանը նույնպես հեռացել է*[5]*: Գրած ես, որ ճառ խոսելու*

---

[1] *Ծ. Ա ղ ա յ ա ն. Հայ ազգային-ազատագրական պայքարի հերոս զորավար Անդրանիկ.– «Կանչ» (շաբաթաթերթ, Բեյրութ), 25. IX. 1982, էջ 6, Լ. Կ ա ր ա պ ե տ յ ա ն. Հովհ. Թումանյանի հասարակական գործունեությունը (Դրվագներ), Երևան, 1992, էջ 224: Թումանյանը Անդրանիկի նամակից քաղվածքներ է ներկայացրել □Նոր Հորիզոն□ օրաթերթին, որտեղ այն տպագրվել է իբրև նամակ՝ ուղղված անձնական բարեկամներից մեկին՝ «Անդրանիկի կռիվները» վերնագրով [տե՛ս □Նոր Հորիզոն□ (Թիֆլիս), 18. XI. 1918]: Հենց այդ պատճառով նամակը մնալով խմբագրությունում՝ դուրս է մնացել բանաստեղծի անձնական արխիվից և այսօր տեղ է գտել ՀԱԱ պահոցներում: Հասցեատիրոջ անունը, անշուշտ, միտումնավոր է բաց թողնվել, հավանաբար, Անդրանիկի նամակին հոդվածի բնույթ և ավելի մեծ հասարակական հնչեղություն տալու նպատակով:*

[2] *Բնագրում՝ Պերկանսկ:*

[3] *Թումանյանի նամակը չի պահպանվել:*

[4] *Խոսքը Երվանդ Փափազյանի մասին է, ով Անդրանիկի քրոջ՝ Նազելիի որդին էր և հավատարիմ թիկնապահը:*

համար խելոք մարդիկ չունենք: Միայլվում ես, մինակ դուն հրավիրե. տե՛ս որ-չափ հավաքվեն գլխիդ սովորական սոխակներ ...

Եթե հայ ազգից կպակսին խելոք մարդիկ, ճապոնացի վերցնենք[6] ...

Պեկզադյաններու[7] մոտ չեմ գնացած: Երկու անգամ գացի Ահարոնյանի[8] մոտ. ապրում է: Ինչպե՞ս է քո առողջությունը:

Կհուսամ, որ շուտով դուն ալ Թիֆլիս կլինես. կխոսանք: Ընդունիր ջերմ բարևներս: Նույնպես հայտնիր ձեր տնեցիներուն հարգանքներս:

Կիկային[9] բարևներս. պեպեքին[10] համբուրեք ու հարցուցեք. դե՛ հուր, դե՛ սուր...»:

Անդրանիկ

ԳԱԹ, ԹՖ, -888 (499): Ինքնագիր:

– 2 –

1917, 4-ը հոկտ<եմբերի>, Նոր Նախիջևան[11]

Սիրելիս, Օհանես,

Քեզ քարտ մը գրեցի, ստացած կլինես[12]:

Հանգիստ եմ, կհուսամ որ դուք ևս լավ եք:

Քեզ նեղություն մը պիտ տամ: Խնդրեմ տեսնես Հուսիկ վարդապետին, որը Ս. Խաչ վանքի վանահայրն է, եկած է Կիսլովոդսկ[13]: Վանքը ունի վեցեն ութ դեսիատին հող մը, որը բանջարանոց մե: Այդ տեղը պուլկարի մը ձեռքն է, որը

---

[5] *Իսպենդերյանը հասարակական գործիչ, Հայոց ազգային բյուրոյի անդամ, իրավաբան, մանկավարժ Հովհաննես Սիմոնի Սպենդիարյանն է, ով այդ օրերին հրաժարվել էր բյուրոյի անդամությունից:*

[6] *Ծաղրում է Ազգային բյուրոյի նիստերից մեկում բյուրոյի նախագահ Սամսոն Հարությունյանի արտահայտած այն կարծիքը, ըստ որի՝ Հայկական հարցի վերջնական լուծման համար կարելի է դիմել Ճապոնիային, որը, իբր, կարող է զենքով օգնել:*

[7] *Նկատի ունի Թումանյանի մտերիմներին՝ մանկական ստեղծագործությունների և ճամփորդական տպավորությունների գրքերի հեղինակ Հեղինե Մելիք-Հայկազյանին և նրա ամուսնուն՝ հասարակական գործիչ, 1917 թվականից Հայոց ազգային խորհրդի անդամ Տիգրան Բեկզադյանին:*

[8] *Ըստ ամենայնի՝ նկատի ունի գրող, հրապարակախոս, դաշնակցական գործիչ Ավետիս Ահարոնյանին:*

[9] *Կիկան (Գիգա)՝ իրավաբան, ՀՀ նախարարների խորհրդի կառավարիչ, քաղաքական գործիչ, գրականագետ, Թումանյանի դստեր՝ Աշխենի ամուսինն է՝ Գեորգ Հովհաննեսի Խատիսյանը:*

[10] *Պեպեքը Աշխեն Թումանյանի և Գեորգ Խատիսյանի որդին է՝ Հովիկը, այդ ժամանակ երկու տարեկան էր:*

[11] ***Բնագրում՝ 4-ը հոկտ., Ն. Նախճվան:***

[12] *Չի պահպանվել:*

[13] *Այդ միջոցին Թումանյանը Պյատիգորսկում և Կիսլովոդսկում հանգանակություն էր կազմակերպում Կովկասյան ռազմաճակատին և գաղթականությանը օգնելու համար, միաժամանակ կրթված մտավորականների անդամագրում էր հայկական ակադեմիա և համալսարան ստեղծելու նպատակով իր հիմնադրած Հայկազյան ընկերությանը:*

լրացած է. խնդրեմ խոսաս, որ ինձ հատկացնեն այդ տեղը: Խոսա նաև և պ. Չալխուշյանին[14]: Ի՞նչ նորություն ունիս:

Երվանդը[15] հոս եկավ, շուտով կգնա Թիֆլիս. երկու տող կգրես պ. Պապաճանյանին[16], որ խնդիրս առնե ու ղրկե, այդ մասին պոլկովնիկ Պեժանպեկով[17] պետք եղած ձևականությունները ըրած է:

Բարևներս ծանոթներին, հարգանքներս օրիորդներուն, համբույրներով՝

Անդրանիկ

Հ. Գ. Ինչպես եղավ ժողովարարության արդյունքը, բժիշկ Մուրադյանին քով նամակներ ունիմ, ղրկես: Նամակներս այս հասցեով կղրկես:

Նույն

ԳԱԹ, ԹՖ, -889 (500): Ինքնագիր

– 3 –

1918, ապրիլի առաջին կեսերին,
<Ալեքսանդրապոլ>[18]

Սիրելիս Օհանես,

Համլիկը[19] եկավ և պատմած կլինի ամեն բան:

Թոթովենցը նոթ է ըրած շատ մը խնդիրներ[20]:

Երեկ Ահարոնյանը[21] և Վահան Փափազյանը[22] եկան քովս՝ հարցնելու: Լուր ղրկեցի, որ ուրիշներից հարցնեն: Իմ քսան ամսվա ըսածներս սուտ էր, չի հավատացին. հիմա ի՞նչ կհարցնեք ինձնից:

Վերջապես եկան, տեսան, նորից կոկորդիլոսի արցունքներ թափեցին և մեկնեցին Սարիղամիշ[23]:

---

[14] *Խոսքը նորնախիջևանցի հասարակական - մշակութային գործիչ Գրիգոր Խաչերեսի Չալխուշյանի մասին է:*

[15] *Նկատի ունի Երվանդ Փափազյանին. տե՛ս նախորդ նամակի թիվ 4 ծանոթությունը:*

[16] *Նկատի ունի իրավաբան, հասարակական գործիչ, Ռուսաստանի պետական չորրորդ դումայի պատգամավոր, Հայոց ազգային բյուրոյի անդամ Միքայել Պապաջանյանին (Բաբաջանյան):*

[17] *Խոսքը վերաբերում է Էրզրումի պաշտպանության մասնակիցներից Պավել Պեժանպեկովին (Բեժանբեկով), ով 1918 թ. Էրզրումի ճակատամարտում դավաճանել է Անդրանիկին:*

[18] ***Անթվակիր է, ժամանակը որոշվում է Անդրանիկի՝ Ալեքսանդրապոլում գտնվելու, ինչպես և Հայոց ազգային խորհրդի ղեկավարության՝ Թիֆլիսից Ալեքսանդրապոլ մեկնելու փաստերով («Հորիզոն», 5. IV. 1918):***

[19] *Համլիկը Թումանյանի հինգերորդ զավակն էր՝ երրորդ որդին, գրող, թարգմանիչ, ՀՀ պառլամենտի դիվանատան վարիչ, ստալինյան ահաբեկչության զոհերից (1896–1937): Նա կոչումով պորուչիկ էր, Էրզրումի ռազմաճակատում զորավարի համհարզը:*

[20] *Նկատի ունի Խ.Պոյաճյանի և Վ. Թոթովենցի հարցազրույցը («Մշակ», 26. III. 1918):*

[21] *Այդ շրջանում Ավետիս Ահարոնյանը Արևելահայ ազգային խորհրդի նախագահն էր: Երբ Հայաստանի կառավարությունը դեռևս կազմավորված չէր, Ազգային խորհուրդն իրեն հայտարարել էր Հայոց գերագույն մարմին:*

[22] *Վահան Փափազյանը (Կոմս) Արևմտահայ ազգային խորհրդի և ՀՀ պառլամենտի անդամ էր, Հայաստանի ապահովության խորհրդի նախագահ, գրող Վրթանես Փափազյանի եղբայրը:*

Ոտքս ցավում է, ոսկորին խրված է ըշտիկ մը, սափոքս շորերս ծակած է, հույս ունիմ, որ քանի օրից, լավանա:

Եկան քովս օրիորդները՝ Նվարդը[24] և Անուշը[25]:

Հեռագիրս ճշտությամբ չէին տպած, որսատեղի դավադիրներու ռիմակի մը մեջ ընկա[26]:

Այսպիսի բան չէի կրնալ երևակայել:

Բարևներով՝ Անդրանիկ

Հ.Գ. Ահարոնյանը և Փափազյանը խնդրեցին, որ մնամ Ալեքսանդրապոլ՝ մինչև իրենց վերադառնալը: Մտադիր եմ Ղարաքիլիսե գնալ:

ԳԱԹ, ԹՖ, -896 (507): Ինքնագիր:

– 4 –

1918, 22/4 նոյեմբեր, Գորիս

Հարգո Միրելի
պ. Հովհաննես Թումանյան

Ճանապարհներու և հաղորդակցությանց խափանման հետևանքով մոտ յոթը ամսվա ակամա կղզիացումե վերջ, այսօր քիչ շատ հանարավորություն կունենամ գրելու Ձեզ և հայտնելու այն ամենը[27], ինչ-որ կատարվեցավ իմ շուրջը այդ ժամանակամիջոցի ընթացքին[28]:

Կռվի ժամանակ միշտ հառաջապահ դիրքերու մեջ, իսկ քաշվելու ժամանակ ամենեն վերջը. գաղթականությունը՝ միշտ առաջը ձգած Հայկական առանձին հարվածող զորամասը, իր դերը կատարեց, անշուշտ, իր կազմութենեն, 10 ապր<իլ> <1918, ի վեր Ալեքսանդրապոլին> մինչև Դիլիջանի շուրջը

---

[23] *Անդրանիկը նեղացած էր Ազգային խորհրդի ղեկավարներից, ովքեր դեմ էին եղել նրա՝ Էրզրումի ռազմաճակատ մեկնելուն:*

[24] *Նվարդը Թումանյանի երրորդ զավակն էր, երկրորդ դուստրը, բանաստեղծ, գրականագետ, թումանյանագետ, հրատարակիչ, բազմաթիվ գրքերի ու հրապարակումների հեղինակ:*

[25] *Անուշը Թումանյանի վեցերորդ զավակն էր, երրորդ դուստրը:*

[26] *Խոսքը վերաբերում է Էրզրումի ռազմաճակատի իրադրությանը, ռազմական գործիչների հետ տարաձայնություններին և մի շարք զինվորականների դավաճանությանը:*

[27] *Այստեղ զորավարը գրել, այնուհետև ջնջել է հետևյալ տողերը. «1918 թ. ապրիլի 10-ին Ալեքսանդրապոլի մեջ կազմակերպեցի Առանձին նորաժող Զորամասը մոտ <1 անընթ.> հոգիե բաղկացած գրեթե ամբողջապես թուրքահայերից … Ամիրիջանյան Կորսակ հրամանատարի հրամանով դեպի … «: Հնարավոր է, հրամանատարի անունը սխալ ընթերցված լինի, քանի որ ջնջված լինելու պատճառով գրեթե անընթեռնելի է:*

[28] *Ճանապարհների փակ լինելու պատճառով Գորիսից Թիֆլիս ուղարկված այս նամակը շատ դժվարությամբ պետք է տեղ հասներ, հասցեատիրոջ համար նույնպես դժվարություններ պետք է ստեղծվեին, ուստի նա պետք է սպասեր համապատասխան առիթի՝ Գորիս ուղարկելու, և այդ առիթը դառնում է Դավիթ Անանունի պաշտոնական գործով Գորիս գնալը:*

տեղի ունեցած պատմական ընդհարումների միջոցին: Հունիսի սկզբներուն, Ն. մ. Զորամասը կգրավեր Դիլիջան՝ իբր սահմանապահ զորամաս, իբր սպիտակ դրոշակով թող Բաթումին մեջ պատգամավորության մը հայտնի, թե հաշտությունն արդեն կնքված է թուրք կառավարության և Հայաստանի Հանրապետության միջև:

Հաստատապես վերահաս լինելով հաշտության դաշնագրի բոլոր այն նվաստացուցիչ և որևէ հեղափոխական հայու համար անհանդուրժելի պայմաններուն, որով հայությունը կհամաձայներ թաղել իր դարերու երազը, ընդունել չափազանց նեղ և ամենաանպետք երկրամասի մը Հայաստան կազմելը, թույլ կուտար թշնամի ուժերու ամեն կերպ օգտվել բոլոր տեսակի փոխադրական միջոցներե և ճանապարհներե, այն ատեն ինձ անհնար թվաց, որ կարենամ իմ զորամասով մնալ որևէ դիրքի վրա և թույլ տալ, որ թշնամի ուժը անցնի գնա կռվելու համար դաշնակից, ազգակից ուժի մը դեմ. այդ պարագան ինձ համար ավելի քան անհանդուրժելի էր, հետևապես անմիջապես տեղեկացուցի կորպուսի հրամանատարության, որպեսզի ուրիշ ուժեր գան, և փոխարինեն իմ զորամասը:

Այդ պահանջես վերջ նկատի ունենալով այն լճացած, ստրկացած մթնոլորտը, բոլոր այն երևակայելի դժբախտությունները, որոնք կսպառնային Հայկ <ական> Հանրապետության և հայ ժողովրդին, վճռեցի անցնել Պարսկաստանով և միանալ դաշնակից անգլիական բանակին, որու շնորհիվ միայն կհուսայի փրկել թրքահայության վերջին բեկորները: Իմ այս որոշումը հաղորդեցի մասնավոր պատգամավորներու միջոցով Վեհ <ափառ> կաթողիկոսին, Հայաստանի Ապահովության խորհրդի Երևանի մարմնին, տաճկահայ զորամասերուն և առհասարակ թուրքահայ ժողովրդին:

Իմ ցանկությունն էր, որ թուրքահայ զինված մասը դուրս գա այդ սահմաններեն, իսկ գաղթականությունը տեղավորի Հայաստանի սահմաններու մեջ, համեմատաբար ապահով շրջանները՝ Նոր Բայազետ, Ախտա և Դարալագյազ:

Դժբախտաբար տաճկահայ զորամասերը զանազան պատճառներով հարկավոր փութկոտությամբ չմիացան զորամասիս, և միայն փոքր խմբակներ ա-ճապարեցին ինձ մոտ, այն ալ՝ ուշ: Զորամասը գնալով ստվարացավ և Նոր Բայազետեն մեկնելուս անոր թիվը հասավ մոտ 3500, 2 թնդանոթով և 6 փուլիմյոթով: Մյուս կողմանե ալ դժբախտաբար գաղթականությունը, ամբողջ ճանապարհին, հակառակ իմ հորդորներուս, չթողեց զորամասը և, ամեն տեղ հետևեցավ անոր, նույնիսկ առաջ անցավ և իր անկարգություններովը և սանձարձակություններովը մեծագույն հարվածը տվավ զորամասի թե՛ ռազմական, թե՛ պարենավորման գործին և թե՛ առհասարակ անոր հմայքին:

Հունիսի 12-ին / ն. տ. / մեկնեցա Նոր Բայազետեն դեպի Ղարանլուղ, ուսկից Քարգլուղ, Քեշիշքենդ, Հախլու, Ազատեն, Սիս, Սուլթանբեկ, Սալասուչ, Խալխալի միջով անցա Նախիջևան:

Հունիսի 20-ին հասնելով Նախիջևան, մի քանի տեղով քանդել տվի երկաթուղու գիծը, թունելները, խափանելու համար Շահթախթի կողմեն որևէ փորձ կռնակս անցնելու: Երկու օր հետո հանկարծակի բերելով մանյովրով մը Ջուլֆայի մեջ (որպես թե գաղթականությունը անցնելու համար հայ և թուրք

պատգամավորության ներկայացուցիչ) անցա Արազի կամուրջը՝ գերի վերցնելով թուրքական 20–25 ասկյարներ երկու օֆիցերներով:

Պարսկաստանի մեջ գտնված դաշնակից ուժերու մասին ոչ մի ստույգ տվյալ չունենալով, վճռեցի անցնել Խոյի վրայով, Սալմաստ, ուր կար ասորական երկու պաթալեոն և չորս պաթալեոն Ուրմիա և Վանի զինված հայկական ուժը, որոնց հետ միանալով՝ կհուսայի հառաջ բերել ակտիվ գործունեության համար բավարար ուժ, հետևաբար ավելի հարմար նկատեցի գնալ Խոյի ուղղությամբ:

Երկու օր հետո Սեյիտավարե 16 վերստ այս կողմ՝ Էվակնու թուրք գյուղի քովի բարձունքին վրա ունեցա առաջին ընդհարումը թուրքական կանոնավոր պաթալեոնի հետ: Այդ օրը միայն ձիավորներովս ջախջախիչ հաղթություն տարի այդ ուժի դեմ և գերեցի 2 թնդանոթ և 3 գնդացիր: Նույն օրը գիշերով մտնելով Սեյիտավար՝ գտանք միայն 12 տեղացի հայեր, որոնք հայտնեցին, թե Սեյիտավարը կոտորված է արդեն նախապես, և որ ասորիները՝ թուրքական ուժերու ճնշման տակ քաշվեր են Ուրմիա և թե Սալմաստը ամբողջովին գաղթած է:

Այս պարագան վճռական ազդեցություն ունեցավ զորամասի գործունեության համար: Ինը օր առաջ այդ շրջանը եկած էր մեկ դիվիզիա տաճկ<ական> զորք, այնպես որ դրությունը լրջացած էր:

Հաջորդ օրը՝ հունիսի 24-ին, Խոյի առաջ տեղի ունեցավ մեծագույն ճակատամարտը: Առավոտուն թշնամի ուժերը սակավ էին, և մեզ հաջողվեց մտնել քաղաքի մի մասը, բայց կեսօրե վերջ թշնամին օգնական ուժ և հրետանի հասնելով, վերոհիշյալ տվյալներուն վրա հնարավորություն չտեսա ավելի հառաջանալու, և զորամասը նահանջեց՝ տալով մոտ 70 սպանված և մոտավորապես նույնքան ալ անհայտ:

Այս անհաջողության մեջ իր բաժինն ունեցավ նաև հրամանատարներեն մեկու գործած սխալը, որով հնարավորություն տվավ թուրք ձիավորներուն անցնել մեր թիկունքը, և գաղթականության հառաջ բերած փանիքան:

Ամապարելով վերադառնալ Ջուլֆա, այնտեղ հավաքեցի զորամասը և ուզեցի անցնել Ղարաբաղ: Ճանապարհին, սակայն, թուրքական Յայճի գյուղը ընդդիմություն ցույց տվավ, պահանջելով մեզմե 10 000 ռ. վճարք: Մի ժամվա ընթացքին գյուղը մաքրվեցավ, և ձեռք ձգեցինք 2 թնդանոթ:

Անցանք Ազատ և Տեր գյուղեր: Այստեղ զորամասն ունեցավ իր ամենեն դաժան օրերը: Հոգնածության, սնունդի բացակայության, Խոյի ճանապարհին խմած կեղտոտ ջուրերու և տաքի հետևանքով հառաջ եկավ համաճարակ: Բժշկ<ական> միջոցները անբավարար, և ահա հառաջ եկավ զորամասի մեջ թուլացում և լքում: Ուտելիքը զորքը իր ձեռքով կհայթայթեր՝ արտերե քաղելով և ուտելով: Մոտավորապես 200 զինվոր մեռան հիվանդութենե, մեկ մասը, մոտ 400 հոգի, լքեց բանակն ու անցավ Ղարաբաղ: Կուզենայի բանակս մի քանի օրով հանգստացնել այդ շրջանը և ապա, կազդուրվելե վերջ, անցնել Ղարաբաղ: Այդ միջոցին Նախիջևանը անհանգիստ էր. Թուրքերը թռուցիկներով հայտարարած էին, թե 3 օրեն կմտնեն Նախիջևան. Հաղորդագրություն կար, թե բոլշևիկները եկած էին Մուսսալու, և թե անգլիացիք Թավրիզ են, որ Թուրքիո մեջ հեղափոխություն կա: Տեղական հայությունը մտահոգ էր իր դրության մասին, և ահա շրջանի լիազոր Աշոտ Մելիք-Մուսայանցը և պորու-

չիկ Խարազյանը դիմելով ցանկություն հայտնեցին, որ զորամասը անցնի Նախիջևանի շրջանը, որ տեղական ուժերն ալ դրվեն իմ տրամադրության տակ, որ ես դիկտատոր լինեմ, և շրջանը հայտարարվի Ռուսաստանի անբաժան մաս, որ ստեղծվի կառավարություն 7 փորթվելներով, և խոստացան հանել տեղական 6000 զինված ուժ: Այս առթիվ հրատարակված փաստաթղթերեն դուրս ինձ մոտ կմնան փաստաթղթեր, որոնց հրատարակումը կմնա ապագային:

Զորամասով միասին անցնելով Ապրակունիս՝ ձեռնարկեցի կազմակերպության և ազգաբնակության զինաթափման գործին: Այդտեղ երևան եկավ տեղական կազմակերպություններու անօգնականությունն ու անկերպարան վիճակը և ազգաբնակության անբարյացակամությունը[29]: Ոչ զինվորներու մոպիլիզացիան, ոչ զորամասի պարենավորումը, ոչ ձիերի ուտեստը և ոչ ալ զինվորներու այլ (շորեր, կոշիկ) կարիքները ամենափոքր չափով չկատարվեցան ու չբավարարվեցան: Մյուս կողմանե դեպքերը գահավիժեցին, և մինչ զբաղված էինք շրջանի զինաթափման գործով, Նախիջևանի վրա արշավեցին Շահթախթեն և միաժամանակ Ջուլֆայի ուղղությամբ տաճկական ուժեր, երկու պոլկ: Լիազորներու ժողովեն մինչև կռիվը տևեց 6 օր: Սիսիան մնաց նաև Սասունի պոլկի 300 զինվորները, որոնք, սակայն, Յապոնի հրավերի վրա շուտով մեկնեցան Դարալագյազ: Տեղական ուժերը անկազմակերպ և շատ սակավ, իսկ առանձին հարվածող զորամասը անբավարար և ուշացած: Հետևաբար Նախիջևանը թողնվեցավ, և զորամասը ուժասպառ, հյուծված Կզնաուրի և Ղազախի թևերով քաշվեցավ Բիստ:

Այնտեղեն զորամասը Նասրվանով և Օխճիի ձորով անցավ Ղափան-Կաթարսկի գավոդ: Պարենավորման դժվարությունը ստիպեց ինձ անցնել Գորիս, ուր կհուսայի գտնել տեղական օժանդակություն: Սակայն խոստացած ջերմ օժանդակությունը չգտնելով և մյուս կողմանե ոչ մի միջոց չունենալով զինվորներու կարիքները բավարարելու՝ հայտարարեցի զինվորներուն, որ ամեն ոք ազատ է՝ ուզողը կմնա, ուզողը կրնա հեռանալ: Այս կերպով զորամասի մի մասը հեռացավ և գնաց դեպի Երևան: Ես ևս, ուզելով անցնել Սիսիան, ճանապարհին ստիպվեցա գտնվել Զանգեզուրի Կենտր<ոնական> Ազգային խորհրդի և Շուշինսկի պոլկի ներկայացուցչի հրավերով Աղուտի-Վաղուտի թուրքական գյուղերը, որոնք ամիսներ ի վեր ճանապարհը փակած էին և սպանած բազմաթիվ անցորդներ: Անցնելով Սիսիան՝ զինակիցներես գլխավորները (Արտաշես, Սմբատ)՝ իրենց խմբապետներով և զորքով, աճապարեցին անցնել Հայկ<ական> Հանրապետության սահմանները, թեև իրենց առաջարկեցի մի ժամանակ ևս մնալ, բայց չլսեցին: Իսկ ես որոշած էի չմտնել այդ սահմանները, այլ անցնել ուրիշ ուղղությամբ: Իսկ Ճիպեճին և Պոնապարթը 75 ձիավորով գնացին՝ ցանկանալով անցնել Ղարաբաղով Թավրիզ, բայց մնացին Մեղրի, ուր են այժմ:

Սեպտ<եմբերի> 4-ին Սիսիանի մեջ տեղի ունեցավ ժողովուրդի գյուղական ներկայացուցիչներու ընդհանուր ժողով, որոնք միաձայն խնդրեցին ինձ զորամասի հետ մնալ Սիսիան՝ թե՛ տեղի պաշտպանության, և թե՛ ինքնապաշտ-

[29] *Նախ գրել է «շահախնդրություն», հետո ջնջել է և փոխարինել «անբարյացակամություն» բառով:*

պանության գործի կազմակերպման համար: Մնացին նաև Սասունի պոլկի 700 զինվորները, որոնք սակայն Յապոնի հրավերի վրա շուտով գնացին Դարալագյազ: Մի քանի օր իմ զորամասի կազմակերպումով զբաղվելե վերջ, ունեցա մոտ 12 000 զինվոր, որմե 3 բոտա, 540 հոգի ոտավոր, 400 ձիավոր, 40 փուլիմյոթ, 110 աբոզ և բժշկական սանիտարներ և այլն: Ապա ձեռնարկեցի Սիսիանի զինվորական ուժի կազմակերպման և հայտարարեցի զորահավաք 20–30 տարեկաններու, որու հետևանքով մեջտեղ եկավ երեք բոտա, որոնք դասավորվեցան հետևյալ տեղերը. առաջին բոտա Գյումրի-Գժաքար[30]: Երկրորդ՝ Բազարչայ-Ղալաճրդ, երրորդ՝ Բոնոջյա-Թազագյուղ <Այելու>: Սեպտ<եմբերի> 10-ին ռազմական տեսակետով Սիսիանը ապահովեցնելու համար Ղազանչիի ուղղությամբ գալիք զորքերու դիմաց՝ դարձյալ Սիսիանի ժողովրդական ներկայացուցիչներու որոշմամբ՝ քանդեցինք ու ավերեցինք Ճոմարթլու, և մասամբ Արասիս թրքական գյուղերը, որու հետևանքով ամբողջ Սիսիանը վերածվեցավ հայկական շրջանի:

Այդ օրերուն տեղի ունեցած է Գորիսի շրջանի մեջ Զապուչի ձախող գործողությունը: Շուշինսկի և Գանձակի զորամասերը, թվով 300 հոգի, իրենց պահեստներով ուզած էին անցնել Շուշի, որը ինքզինքնին անկախ հայտարարելե վերջ ակնդետ կսպասեր ռազմամթերքի՝ Շուշի հասնելուն, և համաձայն տրված հրահանգի՝ հարկավոր քանակությամբ սայլեր և զինվորներ ղրկված էին արդեն Զապուչի և Հաքարլուի ձորերու մյուս կողմը գտնված Ղարաղշլաղ գյուղը, որու ժողովուրդը հայտնի է իբրև լավ կռվողներ: Որոշված օրը ձորի երկու կողմն ալ գործողություն ձեռնարկելով կփորձեն բանալ ճանապարհ, սակայն Գորիսի շրջանի տեղական ժողովուրդի չկամության, օգնության չփութալուն և Շուշինսկի պոլկի բալկովնիկի կողմե անտակտ և թեթև վերաբերմունքին հետևանքով ղարաղշլացիք կմնան մինակ, և թուրքերը, համարձակություն ստանալով, Թերքեմենի հետ միասին կքանդին ու կայրին գյուղը, իսկ բնակչությունը կգաղթե դեպի Շուշի:

Այս հաջողություններն քաջալերված տեղական թուրքերը կփորձեն երկու ճակատով հարձակվիլ Զանգեզուրի վրա՝ Կորինձոր և Խանածախ – Խազնավարի ուղղություններով: Այդ հարձակման հետևանքով Զանգեզուրի Ազգ<ային> խորհուրդն ու ազգաբնակությունը կրկնակի պատգամավորություններով և համախոսականներով կխնդրեին, որ իմ զորամասով շտապ իրենց օգնության փութամ: Այս կոչերուն, անշուշտ, չէի կրնար անտարբեր մնալ, ուստի սեպտ<եմբերի> 16-ին շարժվեցա դեպի Գորիս: Մինչև հասնելս, սակայն, շնորհիվ ռազմամթերքի առատության, տեղական ու գաղթական զինված ուժերուն հաջողվեր էր ետ մղել հարձակվողները, պատճառելով անոնց զգալի կորուստ՝ 200–300 մարդ:

Մինչև այդ, հարաբերությունը Շուշվա հետ կորսված էր, մանավանդ Ղարաղշլաղի այրումով: Այդ օրերուն տեղի թուրք և հայ իշխանությանց հրահանգով Շուշուց Գորիս եկան երեք զանգեզուրցիներ՝ պատմելու այն, ինչ որ տեսած էին այնտեղ …: Անոնք պատմեցին, որ թուրքերը գրաված են Բաքուն, մտած են Շուշի, ուր սեպտ<եմբերի> 24-ին մի քանի գյուղ քանդելե վերջ, քաղաքը հանձնված է և զինաթափ եղած, որ քաղաքի զինված ուժը քաշվեր է գյու-

[30] *Հնարավոր է, նկատի է ունեցել Գժաձորը:*

ղերը, և թե շրջանները ոչ մեկ պայմանով չեն ուզեր հպատակվիլ. միաժամանակ թուրքերը ուղարկած էին պաշտոնագիրներ Գորիս բնակող զանազան անձնավորություններու՝ նշանակելով անոնց գայմագամ Գորիսի և Սիսիանի:

Շուշիի անկման լուրը ազդեց Զանգեզուրի տրամադրության վրա: Եղավ ընդհանուր ներկայացուցչական ժողով, որ առաջի դիրքի վրա գտնված գյուղերու որոշումն էր՝ անպայման կռվել, իսկ քաղաքացիների մի մասը երկմիտ էր: Վրդովված քաղաքացիներու ցույց տված այդ վերաբերմունքեն, մասամբ քաշվեցա Սիսիան, ուր շրջ<անի> ներկ<կայացուցիչների> ժողովը, նկատի ունենալով բոպեի դժվարությունը, միաձայն որոշեց կռվել, և հետևաբար հայտարարեցի երկրորդ զորակոչ մինչև 40 տարեկաններու: Այս զորակոչի հետևանքով կազմվեցավ նախկին 3-ի հետ միասին ընդամենը 7 բոտա, որոնց վրա ավելացնելով իմ զորամասի 3 բոտան, Շուշինսկի 1 բոտան և Գանձակի կես բոտան, կլինի ընդամենը 11 ու կես բոտա: Այդ միջոցին կրկին անգամ բազմաթիվ պատգամավորներ զանազան գյուղերե եկան ինձ խնդրելու, որ օգնության գամ Զանգեզուրին, քանի որ նա կգտնվի թուրքական անմիջական սպառնալիքի տակ, և որ ժամեժամ կսպասվի թուրքերու հառաջխաղություն և քաղաքի անձնատվություն, որ Զանգեզուրի շրջ<անի> ներկ<այացուցիչների> ժողովը միաձայն որոշած է կռվել, որ այդպիսի որոշում է տված և Ղափանը: Կրկին մեկնելով Գորիս, այնտեղ հայտարարեցի մոբիլիզացիա 20–45 տարեկաններու: Թե՛ Սիսիանի, թե՛ Զանգեզուրի և թե՛ Ղափանի մեջ ժողովուրդի տրամադրությունը բարձրացավ: Բարձրացավ մանավանդ, երբ լուր ստացվեց, որ Հունաստանը միացած է դաշնակիցներուն, որ Բուլկարիան զինաթափ է եղած, որ Չաթալճան կոմբակոծվի, որ թուրք զորքերը կքաշվին թե՛ Բաքվի և Պարսկաստանի ֆրոնտը:

Սիսիանի և Զանգեզուրի շրջաններու մեջ ուժերը դասավորված են հետևյալ կերպով.

Սիսիանի պաթոլիոնի …[31]

1-ին բոտա Գյումրի-Գժաձոր <1 անընթ.>

2-րդ Բազարչայ

3-րդ ½ Բազարչայ, ½ Ղալաճրդ

4-րդ բ<ոտա> Բնունիս Ալելու – Թազագյուղ <1 անընթ.>

5-րդ Ղարաքիլիսե

6-րդ Բռնակոթ

7-րդ կազմվելու վրա է

Իսկ Զանգեզուրի

1-ին դիրք Թալվա Չոկար 1 բոտա 1 ծեր սոտնի

Բռնած դիրքեր

2-րդ Բայանդուր 250 34

Խազնավար

Խանոճրդ

3-րդ Տեղ 2 բոտա 1

4-րդ Կորինձոր ½ բոտա 1

[31] *Գրել է հրամանատարի անուն-ազգանունը և ջնջել:*

5-րդ Խնձորեսկ ½ ռոտա 1
6-րդ Քարաշեն 420
<1 անընթ.>
7-րդ <1 անընթ.> 1 16
8-րդ Խազալկապ 40 11
9-րդ Յան Թեփե
Յաշ Թեփե 172

Կա նաև 2 դաշտային թնդանոթ, 400 <1 անընթ.>-ով և 8 փուլիմյոթ, միայն շատ կնեղվենք պատրոնի պակասութենեն, եթե որևէ անհաջողություն լինի, պատճառը միայն այդ պիտի լինի։

Այժմ կգտնվիմ Գորիս, չեմ գիտեր ուրիշներ ինչ կխորհին, և կենթադրեմ, թե իմ ըրածի մասին լավ չեն խորհիր ու խոսիր. բայց անհամեստություն չի լինի, եթե հայտնեմ ոչ միայն իմ, այլ ամբողջ Զանգեզուրի, Ղափանի և Սիսիանի Ազգային խորհուրդի և մանավանդ հայ ժողովուրդի համոզումն է, որ եթե մինչև այսօր թրքական որևէ ուժ չէ մտած Զանգեզուրի կամ Սիսիանի կամ Ղափանի շրջանը, այդ բանը արդյունք է միայն իմ և իմ զորամասի ներկայության այդ շրջաններու մեջ: Ինչպես անցյալի մեջ, զորամասի ավելի արդյունավոր գործողություն ունենալու արգելք է հանդիսացեր 1-ին՝ գաղթականությունը, 2-րդ տեղական կազմակերպություններու թերությունն ու անգործունեությունը, թուլությունը այսօր ևս այդ երկու գործոնները մեծ չափով արգելք են արդյունավետ գործունեության: Զանգեզուրի և Սիսիանի շրջանին մեջ տասնյակ հազարավոր տաճկահայ. ռուսահայ, նախիջևանցի գաղթականությունը մերկ ու սոված թափված են դաշտերու, ձորերու մեջ: Ներկա ցուրտ եղանակին հազարավոր գաղթականություն մնացած է, չէ տեղավորված և ոչ մի ապահովություն չունի վաղվա ուտելիքի մասին: Օրական հարյուրով կմեռնին անտեր և կմնան անթաղ, որոնց հանդեպ, պարզ է, որ անտարբեր չեմ կարող մնալ: Արդյոք չկա՞ որևէ կազմակերպություն, որ օգնության հասներ այս շրջանը մնացած 12–14 հազար գաղթականության, որը անպայման կմահանա, եթե օգնություն չհասնին շուտով:

Երևանեն հայությունը դուրս չելելով իր կաշիեն և Բաթումի դաշնագրեն չուզեր ոչ մեկ օգնություն ցույց տալ այս շրջանի գաղթականության և կապ պահել այստեղի կազմակերպություններու հետ: Կարծեք այստեղի հայությունը խորթ լիներ: Նույնիսկ այստեղեն դրկված հատուկ պատգամավորին (Արտակ Շիրինյանին) պատասխաներ էին, թե «պետք է ամեն զիջում ընենք, նույնիսկ զինաթափ լինենք և զանք հեռացնենք Անդրանիկին», խաչ քաշենք այդ հայության վրա և մերժեց ռազմամթերքի և այլ օժանդակության մասին կատարված պաշտոնական դիմումը։ Ահա այս տեսակ ցինիկ և ստրկական խորհուրդներ տալե վերջ այդ հայկ<ական> կառավարությունը այսօր միայն լայն օրերուն կանդրադառնա Ղարաբաղի վրա և կուզե տեղական զինվոր. Կազմակերպություն հառաջացնել Ղարաբաղի մասին Ադրբեյջանի հետ բանակցություններ կատարելու ժամանակ ռեալ ուժերու վրա հենվելու համար, մի բան, որու համար ուշացեր է: Իսկ տեղական կազմակեպություններու գործունեությունը բոլորովին անբավարար, անբնական է, ամբողջ հոգսը ծանրացած է իմ վրա: Ոչ մի եռանդ և զոհաբերության զգացմունք չի նշմարվիր այս

ժողովուրդի և ղեկավարներու մեջ: Դուրսեն զորամասիս համար ոչ մի կոպեկ օգնություն չեմ ստացած:

Լսեր և կարդացեր եմ, որ, անշուշտ, կարճամիտ և կամ քինախնդիր նախանձոտ դիվանագետներ ինձ կմեղադրեն Լոռիի և Նախիջևանի հայության պատահած դժբախտություններու պատճառով: Այդ մարդիկը, չեմ գիտեր, Բաքվի, Գյոքչայի, Ղարսի, Բերկրիի, Վանի շրջանի և ամբողջ տաճկահայության գլուխն եկած փորձանքներուն ու արհավիրքներուն համար ալ մի՞թե ինձ մեղավոր չեն համարեր: Այդ ամենքի մասին ունիմ իմ փաստաթղթերը, բացի անոնցմե, որոնք արդեն հրատարակված են:

Երկու անգամ է Շուշուց սուրհանդակ և նամակ կստանանք. այնտեղ միշտ սպասող են մեզ. Շրջանին մեջ՝ Հադրութի ճանապարհին, ճարտար ուղարկեր են թուրքական 400 զինվոր՝ 4 թնդանոթով և փուլեմյոթով ճնշելու: Բայց հայերը Սոկրատ բեկի ղեկավարությամբ զանոնք բոլորը կոտորած, և՛ թնդանոթները, և՛ փուլեմյոթները գերած են:

Արտաքին աշխարհեն ստացված լուրերը ցույց կուտան, թե պատմական բոպեներ է, որ կանցնինք, ամեն կողմ՝ Շուշի, Նախիջևան, Մեղրի, Տաճկահայաստան, գործունեության համար ֆրոնտ ունինք, և եթե այս բոպեիս չշարժվինք, ապագա սերունդները մեզ պիտի դատապարտեն, դժբախտաբար, սակայն, ժողովուրդը և իր ղեկավարները թե՛ գաղթականության և թե՛ գործի հանդեպ այնպիսի հանցավոր անտարբերություն ցույց կուտան, որ ուղղակի վհատեցուցիչ է: Երբեք բոպեն չեն ըմբռնած, կարծեք:

Համենայն դեպս, շուտով կշարժվիմ Շուշի՝ այնտեղի դրությունը շտկելու համար, իսկ անկե վերջ ոչինչ կարելի չէ ըսել և նախատեսել: Կսպասիմ դեպքերուն, կամ թե չէ շուտով բախտը կունենամ ձեզ տեսնելու:

Բայց ինձ համար մեծագույն անբախտություն է, որ աշխարհե կտրված ենք, ո՛չ ուրիշներ մեր գործունեութենեն տեղեկություն ունին, ոչ ալ մենք ուրիշներուն գործունեութենեն: Եվ միակ մտահոգությունս է, որ մեր պոռնիկ, ստրկացած դիվանագետները այս անգամ ևս չպաշտպանեն տաճկահայ դատը, և այդ դժբախտ ժողովուրդի այնքան արյունն ու տառապանքը և խոյանքները մնա անհետևանք, և անոնց դիակներու կույտին ու վշտին վրա ուրիշներ, շահագործողներ կերտեն իրենց դիրքը, փառքը:

ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 8, թ. 1–6: Ինքնագիր:

– 5 –

1919, փետրվարի 3 [Գորիս]

Սիրելի Հովհաննես[32]*,*

Ղափանի ֆրանսիական պղնձի ընկերության տնօրեն պ. Ռոպենի միջոցով ղրկած 21/I թվակիր նամակդ ստացա[33]:

---

[32] *Նամակը գրված է* « Начальник армянского особого ударного отряда » *բլանկի վրա:*

[33] *Նամակը չի պահպանվել:*

Այդ նամակիդ արդեն պատասխանած եմ և դրկած Երևանի գծով Ա. Սասունիի միջոցով:[34]

Օգտվելով պ. Ռոպենի վերադարձեն, կերկրորդեմ նամակս:

Պարզ է, որ այսքան հոգնություններե վերջ անհրաժեշտ է, որ հանգստանամ: Այստեղի շրջանի ժողովուրդի թե՛ անտարբեր վերաբերմունքը և թե՛ ընչասեր և այլասերված բարքը այլևս հնարավոր չեն դարձներ ինձ մնալ այս շրջանները: Երևակայեցեք, որ Շուշիի և Ղարաբաղի ինտելիգենցիան, դրամի սիրույն մտեր է ադրբեջանական կառավարական պաշտոնեության դասին մեջ, այդ կերպով թույլ տալով Ադրբեջանին հայտարարելու, որ հայերը կընդունեն Ադրբեջանին ենթարկվիլ և հպատակվիլը:

Մեկ խոսքով անհնար է այլևս զորամասով կարենամ մնալ այս շրջանը: Հետևաբար որոշեցի մեկնել Զանգեզուրից, անցնել Սիսիան և այնտեղ քանի մը օր մնալե վերջ՝ անցնել դեպի Նոր-Բայազետ, Ղարաքիլիսա ու ցրել բանակը[35]*:*

Ղարաքիլիսե հասնելուս մտադիր եմ հրավիրել քեզ գալ Ղարաքիլիսե. կհուսամ, որ հրավիրելուս չես ուշանար գալ: Կրկին անգամ կանդրադառնամ գաղթականության շուրջ, որոնք թվով 22.000 այսօր սովի ու մահվան սպառնալիքի առաջ կանգնած են. անհրաժեշտ է անոնց հասցնել շուտափույթ օգնություն, այլապես բոլորն ալ կկոտորվեն:

Նույն դրությունը կտիրե նաև Գողթանի գավառի մեջ, թուրքերը փակած են թե՛ դեպի Օրդուբաթ–Մեղրի գնալու ճանապարհը և թե՛ դեպի Նախիջևան: Այս կերպով Գողթանի 12.000 ժողովուրդը, հաղորդակցութենե բոլորովին կտրված և արտաքին աշխարհե մթերք ստանալու հնարավորութենե զրկված, սովամահ լինելու վտանգին են ենթարկված: Մինչև հիմա, համաձայն իրենց ներկայացուցչի հայտարարության, 150 հոգի մեռած են սովից:

Չափազանց անմխիթարական է և Սիսիանի ու Զանգեզուրի գաղթականության դրությունը, եթե չասեմ հուսահատական, ո՛չ փող ունեն և ո՛չ ալ, եթե փող իսկ ունենան, մթերք կա գնելու:

Ներփակ Քեզ ուղարկում եմ Գորիսում հրատարակվող □Որոտան□ թերթի մի օրինակը, ուր տպագրված է Բաքվից գեներալ Բագրատունիի միջոցով՝ հոգուտ Զանգեզուրի և Ղարաբաղի գաղթականության ստացած 600.000 ռուպլի գումարի հաշվետվությունը[36]:

---

[34] *Նամակը չի պահպանվել:*

[35] *1919 թ. փետրվարի – մարտի վերջերի պատմական դեպքերն ու անգլիական դիվանագիտության՝ ի վնաս հայ ժողովրդի վարած քաղաքականության հետևանքով ստեղծված ռազմաքաղաքական իրադրությունը փոխում են Անդրանիկ զորավարի ծրագրերն ու նրա զորամասի գործողությունների ընթացքը: 1919 թ. ապրիլի 2-ին նա թողնում է Զանգեզուրը: Ղարաքիլիսա մեկնելու մտադրությունն այդ պահին չի իրականանում:*

[36] *Խոսքը □Որոտան□ թերթի 1918 թ. հունվարի 26-ի համարի մասին է, որը հետաքրքիր փաստաթուղթ է Անդրանիկի՝ Զանգեզուրում ծավալած գործունեության մասին. այն հաստատում է Անդրանիկի նամակում շարադրվածի ճշմարտությունը, ներկայացնում զորավարի հաշվետվությունը: Հրատարակված են Անդրանիկի բնավորության մարդկայնությունն ու ազնվությունը վկայող, նրա մարդասիրության հետաքրքիր օրինակներ, նյութեր ու փաստեր: Թերթի այդ համարը պահվում է Թումանյանի թանգարանում:*

Այդ 600.000 ռուպլիեն զատ նույն միջոցով ինձ ուղարկված էր նաև 400.000 (չորս հարյուր հազար ռուպլի) զորամասի կարիքներու համար և որուն կեսեն ավելին արդեն մի ամսվա ընթացքին ծախսված է:

Անշուշտ, պ. Ռոպենը այստեղի դրության մասին մանրամասն տեղեկություն կուտա: Այդ տեղեկությունները տված կլինեն նաև, անշուշտ, բժիշկ Ռուբենն[37] ու մայոր Կիպոնը[38]:

Երեկ այստեղ ինձ մոտ եկավ նաև անգլո պատերազմական թղթակից պ. Սկոտլանտ Լիտելը, որը մեկնեցավ արդեն Շուշի, Բաքու:

Ազգի համար կոկորդիլոսի արցունք թափող և ազգի ցավերով տառապող պարոնները հիմա ալ վազեցին Փարի՞զ[39]:

Բարևներս բոլոր տնեցիներուն և հարցնողներուն:

Համբույրներով՝ Անդրանիկ

ԳԱԹ, ԹՖ, -890 (501): Ինքնագիր:

– 6 –

1919, փետրվարի 16 [Գորիս]

Սիրելի Հովհաննես[40],

Զորամասի բժ. Ռուբենը Ձեզ հանդիպեր էր, բայց դժբախտաբար չէր տեսած, անշուշտ, մեր մասին տեղեկություններ հաղորդած կլինի ֆրանսիական ընկերության տնօրեն պ. Ռոպենը:

Կհուսամ, որ նա Թիֆլիս եկած և Բարիզ մեկնած կլինի. այդ մասին ինձ իմացուցեք:

Ես ալ առ այժմ այստեղ եմ, մի 20–30 օր ևս:

Առողջությունս լավ է. կհուսամ Դուք ալ լավ եք:

Համբույրներով՝ Անդրանիկ

ԳԱԹ, ԹՖ, -891 (502):

---

[37] ***Ռուբեն Տեր-Մինասյանը Անդրանիկի և նրա զորամասի բժիշկն էր:***

[38] *Կորնել Կիպոնը (Գիբբոն) Անդրկովկասում անգլիական ներկայացուցչության հազարապետն էր:*

[39] *Նկատի ունի Ավ. Ահարոնյանի նախագահությամբ Փարիզի խաղաղության վեհաժողովին մասնակցելու մեկնած պատվիրակությանը, որի կազմում էին Ալ. Խատիսյանը, Արմեն Գարոն և ուրիշներ:*

[40] *Նամակը գրված է* «Начальник армянского особого ударного отряда» *բլանկի վրա:*

– 7 –

1919, ապրիլի 19, Էջմիածին

Սիրելի Հովհաննես[41]*,*

Էջմիածնում գտնվում եմ իմ զորամասով: Եթե հարմարություն ունիս, արի այստեղ, ցանկանում եմ քեզի տեսնել:

Գեներալ- մայոր Անդրանիկ

ԳԱԹ, ԹՖ, -892 (503):

– 8 –

1919, մայիսի 11, Բաթում

Սիրելի Հովհաննես[42]*,*

Թիֆլիսեն մեկնելիս՝ մեկ օրեն հասա Բաթում:

Այստեղ կսպասենք դեռ նավու, ձիս ու մաս մը իրեղեններ արդեն ղրկեցի Վառնա, իսկ մենք երևի դեռ մի քանի օր կսպասենք մինչև մեզ տանող շոգե-նավի գալը:

Շատ ու շատ բարևներ բոլորին
սիրով՝ Antranik
Անդրանիկ

Հ. Գ. Քեֆ անողին քեֆ չի պակսիր. դերդ անողին դերդ չի պակսիր. աշխարհը այսպես եկեր, այսպես կերթա:

ԳԱԹ, ԹՖ, -893 (504): Ինքնագիր

– 9 –

1919, մայիսի 14, Բաթում

Սիրելի Հովհաննես[43]*,*

Արդեն շոգենավի խնդիրը վերջացավ: Կմեկնենք իտալական շոգենավով. միասին կուգան գեներալ Տոմսոնը[44]*, Միք. Պապաջանյանը և Կորնել Կիպոնը:*

---

[41] *Նամակը գրված է* «Начальник армянского особого ударного отряда» *բլանկի վրա:*
[42] *Նամակը գրված է* «Начальник армянского особого ударного отряда» *բլանկի վրա:*
[43] *Նամակը գրված է* «Начальник армянского особого ударного отряда» *բլանկի վրա:*
[44] *Տոմսոնն Անդրկովկասում անգլիական ներկայացուցչության ղեկավարն էր:*

Երևի լավ շրջանակ և գեղեցիկ ճամփորդություն կունենանք. օրն ալ կխոստանա լավ լինել[45]*:*

Հատուկ հարգանքներս մայրիկին. տիկնոջ և օրիորդներուն:

Յտեսություն
Համբույրներով՝
ձեր Անդրանիկ

ԳԱԹ, ԹՖ, -894 (505):

– 10 –

1919 նոյեմբերի 10, Փարիզ

Սիրելի Հովհաննես Թումանյան[46]*,*

Սիրելի՛, Եղիշեն և Զաքեյան ուղարկեցինք Կովկաս պաշտոնով[47]:

Մանրամասնությունք կպատմե քեզ բերանացի: Ամսույս 12-ին գեներալ Բագրատունիի հետ կմեկնինք Ամերիկա[48]: *Իմ առողջությունս այնչափ ալ լավ չէ: Եղիշեին բարոյական աջակցությունդ չինայես:*

Հարգանքներս տիկնոջ և օրիորդներուն, սիրալիր բարևներս քեզ և զավակներուդ:

Ինչպե՞ս, երևանյան տիրող կառավարությունը հոգնեցա՞վ, թե՞ կշարունակե իր համառությունները …

Այդ բոլորի մեջ կցավիմ Խատիսյանին[49]:

Եթե շարունակեն այդ մտայնությամբ տանել ընդհանուր ազգի գործը, քիչ ժամանակեն բնական մահով պիտի մեռնին, և տուժողը պիտի լինի մեր ժողովուրդը: Նույն մտայնությունն է նաև հոս, բայց կլինի մի ամիս, որ բավական զիջած են և իրենց ըսածին նայելով՝ մի կոպեկ էլ չունին: Փող պիտի կտրեին՝ դարձյալ ժողովուրդին կողոպտելու համար, սակայն այդ էլ չհաջողվեց:

Բարևներս պ. Կիկային և հարգանքներս իր տիկնոջ:

Անդրանիկ

Հ. Գ. «Դարդ ընողին դարդ չի պակսիր, քեֆ ընողին քեֆ չի պակսիր»:

Դե՛հ, գինիները լեցուցեք և իմ կենաց խմեցեք: Իմ կողմես մայրիկիդ ձեռքը համբուրես. բարևներս հարցնողաց:

Նույն

ԳԱԹ, ԹՖ, -896 (506):

---

[45] *Անդրանիկը Փարիզ է մեկնել մայիսի 15-ին: Մի քանի տեղ կանգ է առել և ջերմ ու հանդիսավոր ընդունելությունների արժանանալուց հետո Փարիզ է հասել հունիսի 4-ին:*

[46] *Գրված է* «Ноты Metropole, Paris» *բլանկի վրա:*

[47] *Անդրանիկի քարտուղար Եղիշե Քաջունին և Զաքիյանը զորավարի ջանքերով Կովկաս էին գործուղվել Փարիզում կազմակերպված հանգանակության գումարներով տեղի գաղթականությանն օգնելու նպատակով:*

[48] *Ամերիկա է ժամանել նոյեմբերի 23-ին:*

[49] *Ալ. Խատիսյանն այդ ժամանակ Հայաստանի Հանրապետության վարչապետն էր:*